Գ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՀՈԿՏԵՄԲԵՐ 5 1893 ԹԻՒ 19

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիէլեան

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

30 Հոգի միայն տուած են ցարդ իրենց անուն իբրև աշակերտ զինուորական կրթութեան։ Այս ցաւալի է։ Մեր Նիւ Եորքի Հայ երիտասարդաց ծանուցանել ի դէպ կը համարիմ թէ կրթելու յանձն առնողներէն մին զօրավարի տեղակալ է և միւսն լաւագոյն ամերիկեան գնդին նախկին զինուորներէն է։ Երկուքն ալ հարուստ և գիտուն մարդիկ են և Նիւ Եորքի բարձրագոյն ընկերական աստիճաններուն կը վերաբերին։ Երբ այս կարգի զբաղեալ և բարձրագիր օտարականներ յօժարութիւն կը ցուցնեն մեր աղքատիկ գործաւորներուն զինուորական կրթութիւն տալ, ամօթ չէ՞ որ մենք վարանինք դեռ։ Եթէ կ'ուզեմք մեր անձերն և մերայնոց կեանքն, պատիւն, սեպհականութիւնն և արդար դատն պաշտպանել, պէտք է սովրիմք անձնապաշտպանութեան արհեստն։

Զեմք կրնար 30 հոգիով գործի սկսիլ և երկու պատուաւոր անձինք յոգնեցուցնել և երկու-երեք հայախօս օգնականներ։ Պէտք է լինի գոնէ 100 հոգի, որպէս զի ինչ ինչ կրթութիւններ կարելի լինին։ Պիտի սովրիք սրով և սուինով մենամանիլ, հրացան արձակել և նշան առնուլ։ Այս ամառուան շրջանն պիտի տեւէ 3 ամիս, շաբաթն մէկ անգամ, երեկոյին ժամ 8ին։ Ամեն մարդիկ պիտի վճարէ ամիսն 50 սենթ կանխիկ։ Ամեն ոք պարտի ներկայ լինիլ առաջին դասէն սկսեալ։ Կը սպասեմ մինչև Հոկտ. 20. փութացէք յղել ինձ անմիջապէս ձեր անուններ և հասցէ։

Հրաւէրն Նիւ Եորքի և մօտակայից հայերուն միայն է։ 70 մարդ ևս պէտք է։

Բարիզէ գրուած նամակն զոր կը հրատարակեմք ներկայ թուով, Բարիզեան ներկայացուցչաց միոյն, այսինքն սկանատևս վկայի գրչէն է, և կը նկարագրէ Վեհ. Հայրապետի Վիէննայէ անցքին միսիթարական տպաւորութիւնն

Տրեպոլիս, սպտ. 19։ - Թրքական առաքում մի հասաւ այսր ինն Հայ քաղաքական բանտարկեալներով։ Աքսորեալք շղթայակիր են և ի խիստ պահեստի։ Նոցա մէջ է Դանիէլ Վարդապետ, Տէրէվանցի, և բողոքական երէցն Կեսարիոյ՝ Մարտիրոս Ճիվանեան։ Միւս եօթն աքսորեալք են Կեսարացի, Սեբաստացի և Եոզկաթցի։ Այս աքսորելոց վերջին հասկէան կը թուի լինել Ֆէզզան։

Լինէն կը ծանուցանեն մեզ թէ ամսոյս 4ին Մասաչուսէցի Հայոց կողմանէ շնորհաւորական հեռագիր մի ուղղուած է առ Վեհ. Հայրիկ, յէջմիածին։

ՀԱՅՔ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St. New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն։

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատարակուի ամիսն երկու անգամ։

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար երկու տոլար կամ 10 ֆրանք

Կանխիկ

ՌՈՍԸՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զինուորական կրթութիւն—Գիտական ոգին մեր մէջ. Հայ գիտունք, խմբագիրք, և ատենախօսք—Նամակ Բարիզէ. վեհ Հայրապետն ի Վիէննա—Նամակ Լորէնսէն—Հայոց ընդհանուր ժողով—Պատասխան Մ. Չերազի առն. Կարապետեան—Մինաս Չերազի բանախօսութիւնն Ամերիկացւոց առջեւ—Զանազան լուրեր

Կը խնդրեմք որ մընի օրտրրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց
Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

ԳԻՏԱԿԱՆ ՈԳԻՆ

ՄԵՐ ՄԷՋ

ՀԱՅ ԳԻՏՈՒՆՔ, ԽՄԲԱԳԻՐՔ, ԱՏԵՆԱԽՕՍՔ

Ա.

Փռոֆէսէօր Ա. Գառիէռ, գիտնական Ֆռանսացին, որ քաջ Հայագէտ ալ է, ասաց մի օր թէ «Հայոց կը պակսի գիտական ոգին։» Զայդ դիտել տուաւ նա ինձ 1884ին, և ես յայնմ հետէ գուցէ աւելի քան 1884 օրինակ տեսած եմ մեր մէջ զայդ քննադատութիւն արդարացուցնող։

Ի հարկէ իրաւունք չունին Եւրոպացիք խնդրել մեր մէջ յառաջդիմագոյն ազգաց բարձր յատկութիւններն. սակայն մեր սահմանափակ պատեհութեանց չափո՛ւն գոնէ բարուց և ուժերու զարգացում կրնան սպասել մենէ։ Լէգէոն է թիւն այն Հայերու որք Թուրքիոյ, Ռուսիոյ և Եւրոպիոյ մէջ միջին և բարձրագոյն կրթութիւն առած են, և սակայն գիտական ոգին դեռ ա՛յնքան տկար է մեր մէջ որ Գառիէռի դիտողութիւնն մեզադրանաց արդար չեչտն առնուլ կրնայ։

ԵՒ Ի՞ՆՉ Է ԳԻՏԱԿԱՆ ՈԳԻ

Գիտական ոգին մտաց այն ճշմարտախոյզ սրամտութիւնն է որով մարդ կը սիրէ ճանաչել զճշմարտութիւնն ճշդի՛ւ և խորասլէս, և ուստի յոյժ զգայուն է փոքր փաստերու զօրութեան ինչպէս նաև տկար և խախուտ փաստերու անբաւականութեան. ցորչափ իւր խստապահանջ տրամաբանութիւն գոհ չլինի՝ չընդունիր բան մի հեղինակութեան հետեւելով, և ենթադրականն ու անստոյգն իբրեւ իրողութիւն և իբրեւ ճշմարիտ ո՛չ կրնայ կուլ տալ և ոչ կրնայ այլոց ընծայել. նա կը սոսկայ չափազանցութենէ և ամեն ինչ որ ճիշդ համեմատութիւններէ զուրկ է, գարշելի է նորա մտաց։ Այնպիսին քաղցեալ և ծարաւի է ճշմարտութեան, և գիտութիւն կ'ուսանի ո՛չ շահու կամ փառաց համար այլ ի յագուրդ և ի սնունդ իւր մտաց։

Մտաւոր հասունութեան փառաւորագոյն նշանն է գիտական ոգին, և կարելի է ասել թէ այս դարուս մէջ է որ այդ պատուական ոգի զօրացած է և գիտական աշխարհին կը տիրէ։ Գիտական ոգին բուն գիտութեանց սահմաններէն դուրս ալ իւր տերութիւն տարածել ըսկսած է. և այսօր հոգեբանութիւնն, բանասիրութիւնն, լեզուագիտութիւնն, պատմութիւնն և այլ ուսմունք գիտական խիստ մեթոտներով և ոգւով ուսումնասիրուած՝ անցած են գիտութեանց կարգն։ Մինչև անգամ աստուածաբանք գիտական խստութեամբ կը քննեն Աստուածաշունչի զանազան գրքերն։ Այս ոգւոյ չնորհիւ է որ 40—50 տարիէ ի վեր անհուն ուսում և տիալ բաներ արտաքսուած են պատմութեան մէջէն, մանաւանդ հնագոյն դարուց պատմութեան։

Ռամիկ մարդիկ գիտական ոգի բնաւ չունին. նոքա աներեւակայելի դիւրութեամբ կը հաւատան անհաւատալի պատմութեանց և կ'ընդունին անընդունելի գաղափարներ։ Դժբաղդաբար կան նաեւ բազումք որք դպրոց կ'երթան, միջին և բարձրագոյն կրթութիւն կ'առնուն, և սակայն զուրկ կը մնան գիտական ոգիէ։ Մեք տեսած ենք համալսարանի ընթացաւարտներ որք գիտութեան փոքր կամ մեծ պաշար հաւաքած լինելով հանդերձ՝ բոլորովին թոյլ և տկար են գիտական ոգւոյ կոլմանէ, և արտառոց վարդապետութիւններու մտաւորական գերիներ եղած են։

Ընդհանրապէս պատանիք և թերուս երիտասարդք ոչ բնաւ կամ սակաւ ունին գիտական ոգի. դիւրամէտ են զարտակարգն և զարմանալին ընդունելու և շատ ալ կը չափազանցեն ամեն բան։ Ջգօն մը-տօք օժտեալ անհատներ որքան յառաջ երթան գիտութեան և խորհելու կարողութեան մէջ, այնքան աւելի կը լեցուին գիտական ոգւով։

Եւրոպայի մեծ գիտնոց մէջ մեր մասնաւոր ուքանչանաց առարկայն է Ֆրանսացին Բասդէօռ, որ ոչ միայն հզօր հանճարովը բազում գիտական կարեւոր գիւտեր արած և սկզբունքներ հաստատած է, այլ և բարձրագոյն աստիճանաւ ունի գիտական սգին։ Կրնամք ասել թէ նա ճշմարտութեան հոտն հեռուէն կ'առնու, թէպէտ ճշմարիտն գաղտնեաց տասն դռներու ետեւն պահուած լինի, սակայն և այնպէս վերջին աստիճան զգուշաւոր է բան մի մերժելու կամ ընդունելու, սուտ կամ ճշմարիտ հռչակելու մէջ։ Քանի՞ քանի գիտուններ իրենց մէկ գիւտն հռչակել աճապարած են, և անդրագոյն փորձք ապա ցուցած են թէ փորձքն սխալ էին և եզրակացութիւնն անհետեւական։ Բասդէօռի պատահած չէ, և չի կրնար պատահիլ այդպիսի բան։

Գիտական ոգւով հզօր գիտունն ուրիշ մեծ նշան մ'ալ ունի. նա չի մերժեր բան մի զոր հերքել կարող չէ։ Նա գիտական մեթոտներու բովանդակ խստութեամբ կ'ուսանի և կը մշակէ գիտութիւններն, բայց բնաւ չի մերժեր ընդխօլ ամեն ինչ որ չէ կարող իւր գիտական փորձերու և դիտողութեանց ենթարկել. նա կընդունի թէ անդր քան զվերջին սահմանն ուր կը տարածէ գիտութիւնն իւր ոյժ, կը մնայ դեռ աղօտ, անթափանցելի միջոց մի, գաղտնեաց անդունդ մի, յորմէ ևս ճշմարտութեան բուրումն կը զգայ բայց չէ կարող թափանցել ի խորսն— անդ կը սկսի ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆն, որ գիտութեանց բովանդակին վերայ կեցած կը խնդրէ դոհացուցիչ կամ բանաւոր մեկնութիւնն մարդկային կենաց և տիեզերքի նպատակին։

Գիտական ոգի կրող գիտունն չի կըրնար չգգալ թէ գիտութիւնք միջոց են, և իմաստասիրութիւնն է վախճան։ Գիտութիւնք գիտութեանց վերայ դիզուելով կը կազմեն երկնաբերձ իմն լեռ, որոյ գագաթէն իմաստասիրութիւնն ի գնին կը կենայ և կը ջանայ կենաց ու տիեզերքի ճշմարիտ նշանակութիւնն ըմբռնել։ Գիտութիւնն եղելութիւններ կուտայ, որպէս կ'ասէ Ֆռանսացի իմաստասէր մի, լոկ եղելութիւններ, իմաստասիրութի՛ւնն է որ այդ եղելութեանց վերայ խոկալով կընծայէ շարժառիթներ բարոյական գործունէութեան։

Կրոններն ալ ոչ այլ ինչ են բայց եթէ իմաստասիրական դրութիւններ, որք յաճախ տհաս դրութիւններ են տհաս խորհողներէ ծնեալ. բայց կրոններու յետինն անգամ բոլորովին զուրկ չէ ճշմարտութենէ. ինչպէս և կրոններու լաւագոյնն — քրիստոնէութիւնն — բոլորովին գերծ չէ անկատարութենէ։

Գիտական ոգի ունեցող գիտունն ա-

ռաւել կամ նուազ իմաստասէր ալ է, և այս պատճառաւ ասացած են թէ մեծ գիտունն երբէք անհաւատ կամ անկրօն չկարէ լինիլ։

Բ

Մեր ազգի ուսումնական և մշակեալ մասն անդամ դեռ գիտական տղայութեան մէջ է և գիտական ոգին ընդ աղօտ միայն կը նշոլէ մեր լուսազոյն հեղինակաց և պարբերական հրատարակչաց մէջ։ Մխիթարեանց Վիէննայի դպրոցն բաղդատօրէն աւելի ունի գիտական ոգի. Գեր. Այտընեան, Գարագաշեան և այլ մի քանիք գիտական ոգւով գօրացած գրիչներ են։ Մեր Պոլսեցի ինչպէս նաև մեր ռուսահայ գրողաց մէջ այդ ոգին յոյժ տկար է դեռ։ Լրագիրներու խմբագրականներն առատ օրինակներ կընծայեն գիտական ոգւոյ թուլութեան։ Պոլսոյ «Մասիս» շաբաթաթերթի խմբագիրն քիչ ժամանակ առաջ խօսելով պոլսեցի երիտասարդի մի մասին, որ բնական և չափական գիտութեանց դասախօս է ազգային վարժարանաց մէջ, հռչակեց զնա իբրեւ «մեր ազգին մեծագոյն գիտնականը։» Մեք այդ դասատուի գիտական յօդուածներուն մէջ տեսած էինք անզգուշութիւններ և սխալներ, և միաք բերելով մեր այն գիտուններն որք համալսարանաց մէջ բնական և չափական գիտութիւններ ուսած՝ և այժմ գոլէժներու կամ համալսարանաց մէջ այդ գիտութիւններ կը դասախօսեն, վստահօրէն եզրակացուցինք թէ մեր խմբագիրն չպիտի համարձակէր զե. «ազգին մեծագոյն գիտնականը» կոչել եթէ ինքն գիտական ոգիէ զուրկ չլինէր։

Մեր դրագէտներ լրագրական ասպարէզին վերայ զիրար չափազանց ներբողներով շոգմելու և մեծցունելու մէջ յաճախ ծաղրելի ասպիճանին հասած են։

Իսկ երբ Հայ ազգին հնութիւնն և անցեալ փառքն հռչակելու լինին, մինչև իսկ ազգասիրական պարտք կը համարին չափազանցել կամ խախուտ փաստերու վերայ հիմնուած կարծիքներէ օգուտ քաղել։ Նշանաւոր օրինակ մի անցեալ օր տեսանք Մինաս Չերազի ճառին մէջ զոր կարդաց Ամերիկացւոց. անդ իմէջ բերաւ Հ. Ղևոնդ Ալիշանի, իբրև նշանաւոր հեղինակութեան վկայութիւնն թէ Հայոց քաղաքակրթութիւնն աւելի հին է քան զԲաղդէացւոցն և զԵգիպտացւոցն իսկ։ Չգիտեմք թէ ո՞ր գործոյն մէջ և քանի՞ տարի առաջ Ալիշան գրած է զայդ, բայց լա՛ւ գիտեմք այսչափն թէ այդպիսի խոշոր պատմական սխալ մի Անգլիացւոց կամ Ամերիկացւոց ժողովոյ առջեւ դնել, ուր գիտուն անհատներ ալ կը գտնուին, ամենևին արժան չէ, զի կը մատնէ մեր գիտական ոգւոյ թուլութիւնն առանց պատիւ բերելու ազգին։ Մեր առասպելախառն հին պատմութիւնն ճշմարիտ իսկ եթէ ենթադրենք վայրկեան մի, տակաւին մերն երկու հազար տարի ետ կը մնայ քան զԵգիպտացւոց քաղաքակրթութիւնն որ, ըստ նորագոյն ստոյգ քննութեանց, կը տարածուի 4,000 տարի անդր քան ըզ-Փրկչին թուականն։

Մեր ուսումնականք պարտին վերջին ատիճան խիստ տրամաբանութեամբ վարուիլ երբ կը խօսին նոյն իսկ Հայոց, նոյն իսկ անուս և գործաւոր Հայոց։ Գիտական ոգին մշակելու փոխանակ՝ աւելի ցնորամիտ խմացական սովորութեանց վարժեցուցած կը լինին զմեր ժողովուրդն ուսումնական գործիչներ որք ժողովրդեան անհասկանալի գաղափարներ, ընկերային կազմակերպութեանց յարաբարդ դրութիւններ կ'ընծայեն նոցա մտքին և զարմանալի բռնութեամբ ալ կ'ուզեն որ նոքա դաւանին, ընդունին և ստորագրութեամբ ստանձնեն այդ չհասկցուած դրութիւններ։ Ժողովուրդ մի խմացական գերութեան և ապուշ հետևողութեան վարժեցուներլու ի՞նչ ազդու եղանակ։ Գիտական ոգւոյ մուտքն ու մշակումն բոլորովին խափանելու ի՞նչ հզօր միջոց։

Մեք հոս դիտմամբ օրինակներ յիշեցինք մեր բարձր կարգի ուսումնականաց դրութիւններէն, որոց կը հետևին ստորին կարգի ուսումնականներ և սուտն անդամ աղդասիրական պարտք կը համարին։ Լրագրաց թղթակցներ կան, սովորական կամ պատահական, որք հարստահարութեան դէպքերն չափազանցելով կը կարծեն թէ հայ և օտար ընթերցողաց վերայ աւելի ազդու տպաւորութիւն կը գործեն և հետևապէս աւելի ծառայած կը լինին ազգային դատին. սխալի՛ կարծիք. զի երբ անդրագոյն քննութիւնք ապացուցանեն թէ չափազանցութիւն էր, նոյն տեղեկագրութեան բոլոր ոյժն կը կորսուի

և բոլոր ուրիշ տեղեկագրութեանց ալ վերայ կասկած սփռելով՝ տարակուսելի և անազդեցիկ կը գործէ, և այսպէս կը վնասէ ազգային դատին։ Անգիտորէն պարտի մերժել խմբագիրն ամեն թղթակցութիւն յորմէ չափազանցութեան հոտ կուգայ։

Գիտական ոգւոյ կատարեալ բացակայութիւնն զգալու համար պէտք է իջնել դեռ աւելի ստորին շրջանի մէջ ուր ռամիկ բազմութիւնն խաղցունելու կը զբաղին թերուս կամ անուս անհատներ, պաշտօնական ապգասէրներ, ոմանք պարկեշտ ինքնախաբներ և շատք անամօթ խարեբաներ, որք ամեն այլանդակ և զզուելի չափազանցութիւն կը գործեն տրամաբանութեան տարրական օրինաց դէմ և իրենց անիմաստ և անմիտ բացագանչութեանց արժանաւոր արձագանքն ու վարձքն կը գտնեն ժողովրդեան ապուշ և երբեմն հեգնական ծափահարութեանց մէջ։

Մեր ազգային գործունէութեան բազմամեայ ընթացքին մէջ ոչ ինչ այնքան խորապէս տխրեցուցած, գանեցուցած, այ՛ո, հիւանդացուցած է զմեզ որքան այդպիսի ժողովոյ ներկայ գտնուիլ ուր պղնձի անիմաստ զօղանջիւնն աւելի լաւ պիտի հնչէր քան այն անյար, անկարգ, անմիտ խօսքերու այլանդակ կարկտուքն որ պարզամիտ ժողովրդի մերթ ծափն ու մերթ ծիծաղն կը դրդռէ իզուր շարժելով և մաշեցունելով նոցա զգացումներն, և ողբալի կերպիւ անբարոյականացունելով ժողովրդային խորհուրդներն և ոյժերն։

Աւա՜ղ, ո՜ Հայ ժողովուրդ, հանգոյն անհովիւ հօտի, կը թափառիս անջուր և անարօտ վայրեր, առանց սննդեան և առանց սիրոյ։

Ո՞վ դո՞ւ, Մեսրոպայ և Եղնկայ և Սահակայ Աստուածն, հանէ փութով արժանաւոր հովիւներ մեր թշուառ հօտին առաջնորդելու։

Ամեն։

«ՀԱՅՐ»

ԹՂԹԱԿԱՑՄ

Ա. տարի Լտոլար 50 սէնթ կամ 7 ֆր. 50ս.
Բ. տարի Ն տոլար. կամ 10 ֆրանք

ՆԱՄԱԿ ԲԱՐԻՁԷ

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏՆ Ի ՎԻԷՆՆԱ

Երկար ամիսներէ ի վեր Վեհ. Մկրտիչ Ա. Խրիմեան, հայ-ազգայնոցս ալեւոր Հայրիկը, թէև կոչուած ի գլուխ Հայաստանեայց Եկեղեցւոյն, սակայն կը շարունակէր քաւել աքսորի ու բանտի մէջ իր եռանդուն ազգասիրութիւնը և այն օգտակար գործունէութիւնը զոր կատարած է իբր մարդ, իբր քահանայ, իբր վանահայր, իբր առաջնորդ, իբր պատրիարք։ Գիտեն արդէն ընթերցողք թէ ինչ է եղած իր գործոց կարեւորութիւնը, և թէ որքան զանազան ճիւղերու մէջ անմահացուցած է իր անունը։

Կ'ըմբռնուի ուրեմն թէ որքան ուրախութիւն ընծայեց այլևայլ հայ գաղթականութեանց՝ Հայրիկի անցն ընդ Եւրոպա, ուր խել մը կարեւորութիւն ունեցող պատգամաւորներ իրարու ծանօթացան, շօշափեցին իրարու գաղափարները և թերեւս օր մը այս անցողակի տեսութիւնը կարող պիտի ըլլայ ընձեռել յոգուստ ազգին անմոռանալի ծառայութիւններ։ Գէթ այս տեսակետով գոհացուցիչ դէպք մ'է Հայրիկի ուղեւորութիւնը Երուսաղէմէ յԷջմիածին Վիէննայի ճամբով։

Հայ հասարակութեան մէջ այնպէս կը կարծուէր ոմանց կողմանէ, և թերեւս ի հարկին գրաւոր ապացոյցներ կարելի ըլլայ յառաջ բերել շատերու համար, թէ հայ լուսաւորչական և ոչ-լուսաւորչական հասարակութեանց միջև զուտ հայրենասիրութեան տեսակետով անհուն տարբերութիւն մը կար, թէ մանաւանդ եկեղեցականք իրարու վրայ ունին աննպաստ նրկատմունք, որք հանրաբար կը վիրաւորեն ազգայնութեան համերաշխութիւնը։ Այս ամենը յոդ կը ցնդի երբ Վիէննայի Մխիթարեան Հարց եղբայրական և ջերմ ընդունելութիւնը նկատողութեան առնուի. և երբ լաւ մը քննուին այն բարձր ու ազնիւ խօսքերը որոնցմով Գերապայծառ Այլանեան արտայայտեց իր զգացումները Մայր Աթոռոյ նկատմամբ ինչպէս հանդէպ հայկազեան ազգին որոյ անդամներն են ոչ-լուսաւորչականք այնքան

ոչքան են յուսաւորչականք։ Եւ այս մասնաւոր հաստատութեան մը առանձին գաղափարը չէ քանի որ Անիէ դաղթած Հունգարական դաղթականութեան ներկայացուցիչ Վեր. Հ. Ղուկաս Պարոնեան կրկնեց աւելի յառաջ նոյն գաղափարները ի դիմաց ամբողջ թեմին, յուզուած մինչև յարտասուս։

Իմ անձնական ապահովութիւններս այս մասին չեմ փափաքիր երբէք յառաջ բերել հոս, դէթ այսօր, քանզի գլխաւոր խնդիրը սարբեր է, բայց կարեւոր էր ցոյց տալ որոշակի այս սքանչելի ծառայութիւնը զոր կը պարտինք Վեհ. Հայրիկի այցելութեան, այդ է որբագրում սիրալ դաղափարներու աշ-լուսաւորչական Հայոց մասին, և աւելի զգալի մերձեցում մը որ կատարուեցաւ այս առթիւ։

Ցաւալի է սակայն որ Վենետկոյ Մխիթարեան միաբաններու աթոռակալ մեծանուն Հ. Ղեւոնդ Վ. Սլիշանի նամակներն առ Վիէննայի հայ մասնախումբն, մասնաւորապէս Վեհ. Հայրիկի ընդունելութեան մասին ի վանս Վենետկոյ, ո՞վ գիտէ ինչ ձախող պարագաներու բերմամբ անպատասխանի մնացին։ Եւ այս պատճառաւ Վենետկոյ միաբանք միայն ողջերթ մաղթելու համար կրցան ղրկել իրենցմէ երկու վարդապետներ առ Ն. Վեհափառութիւնը։ Շատ ցաւալի է ըստ մեզ այս պարագայն, քանզի առանց սորա աւելի մեծ կ'ըլլար անշուշտ հայ ազգայնոց կողմանէ, առանց խորութեան կրօնի, եղած բարի զգացմանց արտայայտութիւնն, և աւելի կ'ամրապնդուէր այն գաղափարը որոյ կ'ակնարկենք ի վերեւ։

Օգոստոս 29 երեքշաբթի գիշեր Վեհ. Մկրտիչ Խրիմեան հասաւ ի Վիէննա Թրիէսթէն։ Ամեն դաղթականութեանց ներկայացուցիչ, մասնաւոր տեսութենէ մը վերջ ընդ Հայրիկ, չորեքշաբթի առաւօտ պաշտօնապէս ներկայացան խմբովին ընծաներով և ուղերձներով։ Մեծ էր Հայրիկի յուզումը տեսնելով այդքան հեռաւոր տեղեր գտնուած Հայոց մէջ եղած ե ռանդը առ իրենց վեհափառ Հայրապետը։

Ներկայացուցչաց թիւը գրեթէ 25 էր, ներկայացուած էին Փարիզի, Լոնտրայի, Մարսիլիոյ, Մանչեսթրի, Միւնիխի, Վիէննայի, Վառնայի, Հունգարիոյ, Եաֆայի, Պաքուայ, Մոսկուայի, Ռումանիոյ. Ֆօքշանի, ևն Հայերը։

Այս պարագան յիշել տուաւ իրեն նաև մեր գաւառացի եղբայները, անոնց տառապանքները, պէտքերը, վիճակը։ «Դուք այժմ պատասխան կ'ուզէք ինձմէ, բայց այս ժամուս իմ միտքս խաւարած է, որովհետև սրտիս յուզմունքը սահման չունի, ըսաւ։ Կը յիշեմ անցեալը, կը մտաբերեմ հեռու գտնուող մեր եղբայները և սիրտս կը բզձկի ու այցունքներ կուգան աչերս։» Հանդիսականաց վրայ մեծ եղաւ այս բառերու ազդեցութիւնը։ Վեհ. Հայրիկը յայտնեց իր ուրախութիւնը տեսնելով թէ որքան վառ կը մնայ գաղթականութեանց սրտին մէջ ազգասիրութիւնը. խրատեց զամենքը աշխատիլ, դործել, յառաջդիմել։ Ցետ իր աղօթից մասնաւորապէս իր քով հրաւիրեց Սամսոնժվառի կաթոլիկ Հայոց ներկայացուցիչները որոնց հետ տեսակցեցաւ առանձին։ Ներկայացուցիչներէ վերջ եկան մասնաւորներու բազմութիւնները և ի Վիէննայ գըտնուող գրեթէ ամեն Հայերն համբուրելու վեհապետին աջը։

Ներիման Խան՝ Պարսկաց հայ դեսպանը հրաւիրեց գԽրիմեան Հայրիկ մասնաւոր ընթրիքի մը որու նոյնպէս հրաւիրուած էին ներկայացուցչաց մեծամասնութիւնը։ Այս պարզ ու ընտանեկան ընդունելութիւնը շատ գողտր էր ու քաղցր և շատ գոհունակութիւն պատճառեց Վեհափառին։

Գրեթէ ամբողջ առաջին շաբաթն Սեպտեմբերի Վեհ. Խրիմեանի ժամերն անաշխատ չմնացին։ Այցելեց Վիէննայի գլխաւոր եկեղեցիները, միւզէները և գլխաւոր տեղուանքը։ Վիէննայի Մխիթարեանք մասնաւոր հրաւիրած էին զՎեհափառ այցելել և իրենց վանքը, թանգարանը և տպարանը։ Այս այցելութեան յիշատակը անմոռանալի պիտի մնայ։ Երբ Վեհ. Հայրիկ իր այցելութիւնն աւարտեց, մատուցուեցաւ իրեն արծաթէ գրիչ մը որով յատուկ տոմարի մը վրայ արձանագրեց իր վրայ թողուած տպաւորութիւնը այս առթիւ։ «Այս գրիչը, ըսաւ Գեր. Այտընեան, որ Ձեզ համար մասնաւորապէս պատրաստուած էր պիտի մնայ մեր թանգարանին մէջ իբր յիշատակ ձեր այցելութեան։»

Վեհափառ Հայրիկն ու Գեր. Այտընեան փոխադարձ ճառախօսութիւններով երկու հասարակութեանց միջև գտնուած

սիրոյ կապին և դայն աւելի ամրապնդելու պէտքի վրայ խօսեցան։ Ըսին թէ նոյն սիրով կապուած են և եթէ նոյն մտմտոյն չեն պատկանիր անշուշտ նոյն հոգին կ'ոգեւորէ զանոնք։

Երկրորդ անգամ մ'ալ այցելեց Հայրիկ Մխիթարեանց ամառանոցը։ Երեկոյեան ընթրիքի ժամանակ ամբողջ դպրատան աշակերտները երգեհոնի ընկերակցութեամբ երգեցին եկեղեցական երգեր և աւարտեցին «Իմ սիրելի զաւակունքս» երգով։ Այնքան սրտառուչ և պատեհ էր այս երգը որ Վեհ. Հայրիկ յուզուած յոտս ելաւ ըսելով.

«Սիրելի մանկունք, ձեր երգը ինձ շատ ախորժելի էր և զիս շատ յուզեց։ Չէք գիտեր որքան անոյշ կուգայ ինձ լսել այսքան հեռաւոր տեղեր հայրենիքի անունը։ Այո՛ վառ պահեցէք միշտ ձեր սրտին մէջ հայրենեաց սէրը, որովհետեւ պէտք ունի մեր կրկիրը այդ սիրոյն։ Ահա ես ծերացած եմ և իմ օրերս քիչցան այլ ևս. Ձեր մեծաւորն ալ ծերացած է ինձ նման։ Դուք պիտի ըլլաք մեր յաջորդները։ Դուք լուսաւորութեան մէկ մէկ կանթեղներ քիչ ատենէն կը մտնէք հայրենիքի այլ և այլ կեդրոններ հոն լոյս սփռելու համար։ Աշխատեցէք, ուսէք և եղիք բարի մարդեր ուսեալ ու արժանաւոր։ Ես կ'աղօթեմ Մխիթար Աբբայ հօր հետ որ երկինքն է որպէս զի յարատեւէ այս մեծ միաբանական հաստատութիւնը և որպէս զի արգասաւոր ըլլան իր աշխատութիւնները, ու կը խմեմ այս բաժակը ձեր անուշ ու մատաղ կենացը։»

Այս քաղցր խօսքերուն պատասխան տուաւ Գեր. Այտընեան։

Վեհ. Հայրիկի ի պատիւ տրուած հացկերոյթներէն պէտք է յիշել մասնաւորապէս երկուքը։

Առաջինն տրուեցաւ Սեպտ. 2 Շաբաթ գիշեր և որոյ ներկայ էին Նիրիման-Խան, Ռուսիոյ դեսպանատան ներկայացուցիչն և հիւպատոսն։ Էջմիածնի կողմանէ ղրկուած երկու արքեպիսկոպոսունք և երկու աշխարհական նուիրակք, ամբողջ գաղթականութեանց ներկայացուցիչք, վերջապէս ի մի բան 45 հոգիէ կը բաղկանար սեղանակցաց թիւն։ Ի վերջ ընթրիքին Վեհ. Հայրիկը ոտք ելնելով առաջարկեց իր բաժակը Օգ. Զարի կենաց, ըսելով թէ մինչ այս ալեւոր տարիքը միշտ քարոզած է յառաջդիմութիւն և ուրիշ ոչինչ. այսօր կը փոփոխէ իր հպատակութիւնը և այս նոր փոփոխութեան օրը կը յայտարարէ թէ կրկին պիտի քարոզէ յառաջդիմութիւն և ուրիշ ոչինչ։ Ու խմեց իր բաժակը Զարին կենաց։ Քանզի իմ առաջին պարտականութիւնս է, աւելցուց, ուրիշ ոչէ անձէ յառաջիչել իմ այժմու վեհապետն ու խմել իր կենաց այս բաժակը։ Այս բաժակախօսութեան պատասխանեց Ռուսիոյ դեսպանատան ներկայացուցիչն և յաջորդաբար Խրիմեան Հայրիկ բաժակներ առաջարկեց Շահի և Ֆռանսուա Ժոզէֆ կայսեր կենաց։

Երկրորդ հացկերոյթն ունէր աւելի մտերմական հանգամանք մը։ Գաղթականութեանց ներկայացուցիչք հրաւիրեցին զՀայրիկ հրաժեշտի ճաշկերոյթին։ Եւ այս տեղի ունեցաւ Սեպտ. 3 կիրակի ցերեկին։ Կերակրոց անունները ինչպէս նաև ըմպելեացը կը յիշեցնէին Հայրիկի սիրելի մէկ մէկ հայ քաղաքի կամ գաւառի անունը, ինչպէս Վան, Մուշ, Երուսաղէմ, Էջմիածին, Գանձակ, Երևան ևն։ Փարիզի պատգամաւորներէն մին ի վերջ ճաշին բաժակ առաջարկեց ի դիմաց հայ գաղթականութեանց ներկայացուցիչներուն վասն Հայրիկի. որոյ Հայրիկ պատասխանեց յիշելով այն հազարաւոր հրաժեշտներն զորս ստիպուած էր ընելու սկզբանէ ի վեր։ Յիշեց Մուշ, Վան, Կ. Պոլիս, խելմը քաղաքներ և վերջապէս Կ. Պոլիս. Երուսաղէմ Աղէքսանդրիա։ «Այսօր կը հասնիմ ի Վիէննա և ձեզ տալու եմ հրաժեշտս յարեց Հայրիկ։ Պիտի մեկնիմ ասկից ալ Էջմիածին կրկին հրաժեշտ. և անկից ալ յաւիտենական կեանքը երթալու համար։ Պիտի աշխատիմ միշտ ինչպէս յանցելումս մեր ազգին բարօրութեան համար. և դուք աշխատեցէք միշտ։ Ի՞նչ է իմ դերս, չեմ գիտեր. դուք ձեր ճառախօսութեանց մէջ ցոյց կուտաք պաշտօնիս ծանրութիւնը ու դժուարութիւնը, ըսելով թէ այս կուզէք, թէ այն կուզէք։ Ինչ՞ կարող եմ ընել ես, չգիտեմ։ Բայց կը մտածեմ. Պօղոս առաքելոյն այն խօսքին թէ Աստուած կը գործէ իր ամեն ըրածները գրեթէ միշտ ամենատկարներու ձեռօքը, և կը հարցնեմ ինքնովին թէ արդեօք ծածուկ դիտաւորութիւն մի չունի Նախախնամութիւնը որ այսպէս երկար տարիներ հաճած է անվտանգ պահել Վա-

նի հոգովը չինուած այս սկար հոգէ ամանը և պահպանած զիս այսքան երթեւեկութեանցս մէջ ու ճախորդութեանցս ժամուն իր հզօր թեւովը հասցնելու համար զիս այս պաշտօնիս գլուխը։»

Վեհ. Հայրիկի այս խորհրդաւոր խօսքերը ընդունուեցան երկար ծափահարութիւններով ու կեցցէներով և Ն. Վեհափառութիւնը քաշուեցաւ իր առանձնարանը։

Նոյն երեկոյ իսկ որ է 3 Սեպտ. կիրակի. կաթողիկոսը տակաւին չեկած օթեւանը կանչեց ամեն հոն գտնուող Հայերը ու վերջին մնաք բարով մ'ըսաւ ամենուն։

«Ժամանակս սուղ է ու չեմ կրնար ձեզ երկար խօսիլ ինչպէս կը փափաքէի։ Սակայն կը յորդորեմ ձեզ հետեւիլ Ս. Աւետարանին խօսքին որ կը պատուիրէ ամենուս սիրել զիրար։ Այս է լաւագոյն միջոցը, լաւագոյն աղբիւրը ամեն բարութեանց։ Մոռացէք իրարու յանցանքները ներեցէք միմեանց, սիրեցէք զիրար միշտ, և միացէք։ Այն ժամանակ միայն ձեր աշխատութիւնները արգասաւոր պիտի ըլլան երբ սիրով իրարու միացած աշխատիք ձեռք ձեռքի տուած։ Այս է իմ վերջին խօսքս ձեզ, այս է իմ լաւագոյն խրատս։ Հիմա կը մեկնիմ և թերեւս այլ չտեսնուելու համար, բայց կը յիշեմ զձեզ միշտ. դուք ալ մի մոռնաք զիս, յիշեցէք ձեր Հայրիկը որ կը կը սիրէ զձեզ ամենքդ առանց խտրութեան։ Բայց յիշեցէք և իմ խօսքերս, սիրեցէք զիրար և միացէք իրարու ձեր ամեն ձեռնարկութեանց մէջ։»

Վերջապէս երեկոյեան ժամ 10ին մեկնեցաւ կառախումբը տանելով իր հետ Հայոց ամենասիրեցեալ Հայրիկը դէպ ի Օ. տեսսա ուր Պ. Մանդաչեան իր շոգենաւ դրած Ն. Վեհափառութեան տրամադրութեան ներքեւ։ Այդ մասնաւոր շոգենաւով կը մեկնի Խրիմեան Հայրիկ յԷջմիածին յԱթոռ առաքելական եկեղեցւոյն։

Շ

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 գաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

ՆԱՄԱԿ ԼՈՐԷՆՍԷՆ

Լորէնս, 4 Հոկտ. 1893

Մեծայարգ խմբագիր «Հայք»ի

Թէև զձեզ անձամբ ճանաչելու պատիւն ունեցած չեմ, սակայն երկու տարի, ի վեր ձեր պատուական թերթի խմբագրականներն կարդալով՝ ըստ կարի զձեզ ճանաչած ըլլալու բաղդն ունեցած եմ։ Եւ ամենայն խղճիւ կ'ըսեմ, 18դ թիւն այս անգամ կարդալէս ետև, թէ յիրաւի «ՀԱՅՐ»Ը «ճշմարիտ ազատամիտ» թերթն է։ Կեցցէ՛ ՀԱՅՐ, և կեցցեն նորա պէս ազատամիտ գործիչք։

Գիտեմ թէ բաղդամբ առանց խորապէս ուսումնասիրելու ձեր քննադատութիւնն պիտի վչտանան և գուցէ ձեր անձի դէմ յարձակում ընեն, ինչպէս երբեմն ինքզինքնին խմբագիր կարծելու յաւակնութիւնն ունեցողներ ըրին, բայց լրջամիտ և զգօն մարմնոց մէջ կը ծափահարուին ի սրտէ ձեր ազատամիտ և անկողմնակալ գաղափարք։ Ձճշմարիտն ձեզ նեցուկ ունիք. անկումն Ձեզմանից շատ հեռի է։

Ես ալ ազատամիտ Հնչակեան մը կը նկատեմ զիս, և իբրեւ այնպիսի կը բաղձամ երկու խօսք ըսել, եթէ անկիւն մը շնորհէք ՀԱՅՐի մէջ։

Մենք կը խոստովանինք թէ մեր այժ բաւական չէ թուրք զօրաց և խուժանին դիմադրելու յաւուրն ահաւոր յեղափոխութեան։ Սակայն մեր անմեղ արեամբ է որ իդատ պիտի կոչեմք եւրոպական տէրութիւններն, որք տեսնելով մեր դատի արդարութիւնն, պիտի վճռեն ի նը. պաստ մեր։ Արդ, սովորութիւն, և օգտակար և հարկաւոր սովորութիւն է դատավարութենէ առաջ տեսնել ընդհանուր դատախազն կամ ժողովոյ մէկ անդամն և պատմել նմա դատին մանրամասնութիւնքն։ Մեր դատին համար ահա այդ բաժինն կը կատարէ դիւանագիտական գործիչն։ Նա կը բացատրէ մեր իրաւունքներն, մեզ արդարացուցող պարագաներն և այսպէս կ'օգնէ մեր դատին վերջնական յաջողութեան։ Ուրեմն մենք Հնչակեանքս պարտինք դիւանագիտական աշխատութեան չհակառակիլ, և չենք ալ հակառակիր եթէ լոկ կառավարութեանց դիմե-

լու տեղ՝ դիմուի նաև, դիմուի մանաւանդ հանրային կարծիքին, ժողովրդեան համոզման, որ բուն դատաւորն պիտի ըլլայ օրմը։

Սոսիալիզմի մասին ալ սա պիտի ըսեմ թէ յիրաւի կրնայ շատ վնաս բերել մեր դատին հետեւեալ կերպով։ Թուրք կառավարութիւնն մեզ պիտի ներկայացուցնէ, իւր սատայօդութեամբ, իրրև ոչնչական, և մեր արիւնն անարխիստներու արիւն պիտի կոչէ։ Եղբայրներ, քանի որ մեր դիմացինը մեզմէ ուժով ըլլալէն դատ անխիղճ սուտեր չինելու և իրրեւ ճշմարիտ ընծայելու մէջ շատ վարպետ է (զի այդ է իւր արհեստը), պէտք է մենք ալ շատ զգուշութեամբ և ճարտարութեամբ գործենք, չըլլայ թէ բառերու զոհ տանք մեր իրաւունքն և արիւնը։

Նաև կը խնդրեմ որ ամէն խօսողի չհաւատանք առանց իմաստասիրելու, և ամէն ատենախօս ծափահարելու տգեղ սովորութեան վերջ տանք։ Դպրոցի սրահին մէջ տեսական փորձեր չենք ըներ, այլ աշխարհի մէջ մահու և կենաց խնդրով կը զբաղինք։ Նարպէոնի պէս նուրբ քաղաքագէտներ անգամ մի փոքր սխալ գործելով պարտութիւն կրած են. իսկ մեզի պէս համբակներու յախուռն սխալ մէկ ձըգտումն կրնայ ի սպառ մահ պատճառել։ Մեծ է գործն, վճռողական է պարագան. տղայաբար չխաղանք գործին հետ։

ՋԵՐՄ ՀՆՉԱԿԵԱՆ ՀՐԱՉԵԱՑ

THE ANGLO-ARMENIAN GAZETTE
ԱՆԳԼԵՒՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶԷԹ
3, Plowden Buildings
LONDON, E. C

Վերոյիշեալ թերթի առաջին թիւն գոհութեամբ ստացանք և կը մաղթեմք լիուլի յաջողութիւն։

Թերթն զուտ անգլիերէն է, ութ երեսներէ բաղկացեալ, և կը հրատարակուի ամիսն անգամ մի։ Տարեկան բաժնեգինն է 5 շիլին։

Ընթերցողք գիտեն թէ զուտ անգլիերէն ամսաթերթ մ'ալ ԱՐԱ. մեր Հընդկահայ ազգայինք կը հրատարակեն տարիէ մ'իվեր, նոյնպէս բոլորովին զուտ հայկական պարունակութեամբ։

Այս թերթերն Ամերիկայի Հայոց և բուն ամերիկացւոց մէջ տարածել արժան է յօգուտ հայ դատին։

ՀԱՅՈՑ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ի Նիւ Եորք, յ30 Սեպտ. 1893

Մեծայարգ փրոֆ. Մինաս Չերազ Շիքակոյի Կրօնական Համաժողովէն վերադարձած լինելով՝ իւր հրաժշտի ողջոյն տուաւ Նիւ Եորքի և շրջակայց Հայ գաղութներուն Սեպտ. 30ի շաբաթ երեկոյին։ Ներկայից թիւն առաջին անգամուն չափ ստուար չէր, սակայն մեծ ոգեւորութեամբ ծափահարեց զբաղմավաստակ գըրողն։ Ժողովոյն կ'ատենապետէր հայասիրական ընկերութեան ատենապետն Մեծ. Տիոնեան։ Ժողովն բացուեցաւ «Հայրիկ» երգովն, զոր երգեց երիտասարդաց խմբակ մի, որ կ'երևի թէ յանկարծ հրաւիրեալ էր այդ բաժին յանձն առնուլ։ Ցետոյ ատենապետն ծանոյց թէ երիտասարդներէն ոմն ուղերձ մի գրած է իգովեստ Տէր Չերազի, և կը բաղձայ ժողովոյն մէջ կարդալ զայն։ Այդ ուղերձ կարդաց Հեղինակն աճապարող առագանութեամբ։ Ցետոյ երգեց մի և նոյն խմբակն զ«Բայլերդ Ազատութեան»։

Ապա երեկոյի ատենախօսն և հիւրն բուռն ծափահարութեանց մէջ ելաւ խօսիլ։ Իւր ատենախօսութիւն երկու մասերէ կամ ճիւղերէ կը բաղկանար, առաջինն էր իւր Շիքակոյ ուղեւորութեան և աշխատութեան պատմութիւնն, երկրորդն պատասխան էր Մեծայարգ Ն. Կարապետեան սոսիալիստ յեղափոխական գործիչի քննադատութեան իւր նախորդ ճառին։

Ահաւասիկ առաջին ճառին համառօտութիւնն։

Ուրախ եմ կարենալ ասել ձեզ թէ Հայութիւնն կրցաւ Շիքակոյի Կրօն. Համաժողովոյն մէջ ներկայնալ վեց հոգիներով, որք պանծացուցին զՀայ ազգն։ Մեր սիրելի բողոքական Հայ եղբայրներուս կողմէն նախ Պատ. Աստուրեան յանուն Հայ բողոքական համայնքին ողջոյն տուաւ Համաժողովոյն։ Պրն. Կարապետեան միանգամ խօսեցաւ Հայաստանի թշուառ կացութեան վերայ։ Պատ. Ա. Մ. Իգնատիոսեան եղաւ երրորդ Հայ ատենախօսն սր Հայ բողոքականութեան անցելոյն և ապագային վերայ շատ պատուաբեր տեսու-

թիւն մի արաւ։ Չորրորդն, Պրն. Խոչումեան եւս շատ լաւ խօսեցաւ։ Հինգերորդն, Պրն. Հ. Քիրէչեան փայլուն բանախօսութիւն մ'արաւ։ Վեցերորդ Հայ խօսողն եղաւ նա որ այժմ պատիւ ունի այս խօսքերն ձեզ ասելու։

Երբ Շիքակոյի կայարանն հասայ, իբր 10 Հայեր եկան զիս դիմաւորել, որոց հետ կար Ամերիկացի թղթակից մի։ Սա իւր թերթի մէջ տեղեկագրած լինելով իմ մասին, Արուեստահանդիսի Թուրք բաժնին պատուիրակներն նախանձ և գայրոյթ զգացին, և սկսան միջոց գործածել թրքասիրական հրատարակութեամբ հակակշռելու իմ առթիւ հրատարակուածներն։ Մասնաւորապէս նամակագիր մի զՍուլթան Համիտ հռչակեց իբրեւ արդարասէր, կրթասէր Վեհապետ։ Վերջերս Տիկին Փոթր և այլ Ամերիկացի Տիկնայք, կեղծաւորներու թիւր ներկայացմանց զոհ երթալով ուղերձ մի յղած էին Սուլթանին, չնորհակալ լինելով որ կանանց սեռին կրթութեան և ազնուացման այնքան հոգածութիւն ունի։ Այս դէպքին իրազեկ լինելով, երբ կանանց վիճակին նկարագրութիւնն անելու օրակարգն հասաւ, ես ալ խօսեցայ և ցուցի թէ Թուրքիոյ մէջ Հայեր կը յարգեն զկին, մինչ Թուրքք և մահմետականք առ հասարակ յոյժ անարգ դիրք տուած են կնոջ և այդ պատճառաւ ալ մոմիացած կը մնան։ Բոլորք ընդունեցին այս խօսքերս բուռն ծափահարութեամբ։ Սեպտ. 15ի նոյնն ամբողջ օրուան նախագահ ընտրուեցայ, պատիւ մի որ արևելեան պատուիրակաց մէջէ միայն ինձ ընծայուեցաւ։ Համաժողովոյն նախագահն Տէր ՊԱՐՈԶ Ջերմագին համակրանք ցոյց Հայոց մասին։ Սպտ. 26ին կարդացի Հայաստանեայց Եկեղեցւոյ վերայ հառաջ, զոր, առ ի չգոյէ ժամանակի, ամբողջ չկարդացի, սակայն ամբողջ պիտի հրատարակուի այն մեծ հատորի մէջ որ այդ Համաժողովոյ արարքն պիտի պատմէ։ Կիրակի. Համաժողովոյ պատուիրակաց համար 25 արծաթեայ շքադրամոց մին ինձ չնորհեցաւ։

Շիքակոյի մէջ բնակող մեր Հայ Հայրենակցաց եւս խօսելու առիթ ունենալով շեշտեցի միութեան և սիրոյ պէտքն։ Հրէայ, Քրիստոնեայ, Պուտտայական, Պրահմանական և այլ կրօններու և զանազան ցեղերու մարդիկ Շիքակոյի Կր. Համաժողովոյն մէջ միմիեանց հետ իբրեւ եղբայր վարուեցան, մ'ըքան աւելի պարտ և պատշաճ է որ մեք Հայքս ալ, թէպէտ կրօնական և քաղաքական յոյժ տարբեր կարծիքներ ունենամք, դարձեալ իբրև մեկ ազգի և հայրենեաց զաւակներ սիրաւիր և անխտիր եղբայրութեամբ վարուիմք իրարու հետ։

Ցարգելի հիւրն յայնժամ անցաւ իր բանից երկրորդ կամ վիճաբանական բաժնին, որ պատասխան էր Տէր Ն. Կարապետեանի քննադատութեան։ Ջերազ, ինթացս պատասխանին առիթ ունեցաւ յարգանք յիշելու Նիւ Եորքցի Հայու մի անունն, և ահա ոմն ի ներկայից սուլեց։ Այս սուլման զէմ ժողովն ծափահարութեանց երկար փոթորիկ մի հանելով՝ իւր ծափիւք իրր բուռն և զայրագին ապտակօք ծեծեց սուլողին ժպիրհ երեսներն։ Ժողովրդային համակրանաց այս յանկարծաբուխ հոսանքն կ'ապացուցանէր թէ, սուլողն և իւր մի քանի դաշնակիցք ի զո՛ւր աշխատած էին տարիներէ իվեր իրր մասնիշ և Բ. Դրան գործի ներկայացուցիչ այդ ծափահարեալ ազգային։ Ժողովրդեան հասուն մասն երբե՛ք չի խաբուիր, և տհասն ալ յաւիտեան խաբուած չի մնար։

Երբ Ջերազ աւարտեց իւր պատասխան (զոր քիչ մ'աւելի հեռուն կը դնեմք առանձին խորագրով), ատենապետն հրաւիրեց որ հարցում կամ դիտողութիւն անել ուզողներն անեն, պայմանաւ որ իւրաքանչիւր ատենախօս առնու ոչ աւելի քան հինգ վայրկեան։

Մի քանի վայրկեան լռութիւն տիրեց. յայտնի էր թէ խօսելու փափաքողներ շատ չկային։ Ապա Տէր Ֆիլեան խօսք առնելով ասաց թէ զ61րդ յօդուած մոռցած են պատուիրանք, մոռցած է Խրիմեան Հայրիկ. հարկ է աւելի բուռն և ազդու գործիներ գործածել։ ասաց թէ կ'ուզէր երկար խօսել այս մասին բայց ժամանակի սահմանն յոյժ անձուկ էր։

Տեր Ջերազի առանձին թելադրութեամբ ատենապետն հրաւիրեց զ Տէր Ֆիլեան որ տան վայրկեան եւս խօսի։ Ֆիլեան յուզմամբ պատասխանեց թէ չէ կարող տան վայրկեանի մէջ աւարտել իւր խօսք։ Ժողովականներէն ոմանք սկսան պահանջել որ ժամանակ տրուի նմա խօսիլ բաւական երկար, և այսպէս

սկսաւ դժգոհ յուզման սկզբնաւորութիւն մի, զոր վերջացնելու բաղձանօք ատենապետն «ամօ՛թ է, ամօ՛թ» գոչեց։ Այս անպատեհ յանդիմանութիւն աւելի գրգրեց և խանգարեց ժողովը։

Ձերազ բաղձանք յայտնեց որ Մեծ. Ֆիլեանի ժամանակ տրուի խօսելու, և ծանոյց թէ ինքն ոչ լոկ հարցում այլ և քննադատութիւն կը հրաւիրէ։ Ֆիլեան ի բեմ եկաւ ուրեմն, բայց փոխանակ խօսելու՝ յայտարարեց թէ ինքն կը սիրէ զ փրոֆ. Ձերազ, և թէ իւր խօսելիք երկար լինելով, ուրիշ առթիւ պիտի ճառէ։

Մեծ. Ֆիլեանի այս հրաժեշտ մեծ զարմանք պատճառեց, քանզի եթէ գործածէր 10 վայրկեաններն և լուրջ մտքերով հետաքրքրէր զ ժողովը, տարակոյս չկայ թէ քուէիւք և ծափիւք պիտի խնդրէին իրմէ իւր խօսք ամբողջացուցանել։

Ձերազ վերջին անգամ մ'ալ խօսելով դիտել տուաւ թէ վիճաբանութեան մէջ ջերմութիւնն ամօթ չէ. ամեն ազգի և ժողովոյ մէջ ալ կը պատահի այդ։ Անհամաձայնութիւնք յաճախ առ երևույթ միայն են։ Զէնք գործածելու պէտքն ինքն ալ չուրանար, բայց գործածելու ժամանակի նկատմամբ համակարծիք չէ անոնց հետ ոտք այժմէն զայն ի կիր առնուլ կը ուզեն։ Պէտք չէ ենթադրել թէ մեր խմբագրեր ալ իրարմէ շատ հեռու են կամ իրարու հակառակ որպէս վեր ի վերոյ դիտողին կրնայ թուիլ։ Թերթերն մէկ մէկ պատնէշ չեն զայնս իրարմէ բաժանեալ պահելու։ Նիւ Եորքի ՀԱՅՐՆ, Մարսիլիոյ ԱՐՄԷՆԻԱՆ, Լոնտոնի ԼԱՐՄԷՆԻՆ, Աթէնքի ՀՆՉԱԿՆ, եթէ այդ չորս քաղաքական թերթերն իրարու վերայ բարդեմք, տգայ մի կարող է ամենն մէկէն պատռել։—Շնորհակալեաց բանիւք և մեղք բարով ասելով վերջ տուաւ իւր բանից՝ բուռն և երկար ծափահարութեանց մէջ։

ՊԱՏԱՍԽԱՆ

Մ. ՁԵՐԱԶԻ ԱՌ Ն. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Սիրելի հայրենակիցներ,

Մինչ ես ի Շիքակոյ կը գտնուէի, դուք ատ ժողով ունեցած էք, ուր իմ եղբայրակից Պրն. Նշան Կարապետեան քննադատութիւն արած է ինչ ինչ կարծեաց նկատմամբ զորս յառաջ բերած էի երբ առաջին անգամ ձեզ խօսելու պատիւ ունեցայ։ Պայրըն ասացած է թէ կիներն իրարու շատ կը նախանձին, բայց գրագէտներն և խմբագրեր ա՛լ աւելի կը նախանձին միմեանց։ Որովհետև իմ լրագրի լեզուն օտար է, լաւ կը լինի որ մեր պատուարժան եղբայրակցի կարծիքներն քննեմ ատ ձեր առաջև։ Ինքն ներկայ էր երբ ես խօսեցայ. սակայն ես բացակայ էի երբ ինք քննադատեց զիս։ Նորա քննադատութիւնն կը գտնեմ «ՀԱՅՐ»ի մէջ բովանդակուած, և ուստի ձեռք առնլով հոս իմ ... պաշտօնակցի թերթն, յօդուած առ յօդուած կը պատասխանեմ։

1. Բաղձալի պահուն ժողովուրդն ոտքի հանել ելեքտրական ճրագաց բազմութիւն վառելու չի նմանիր. յայդմ համամիտ եմ իրեն։ Բայց պէտք է և գայն դիտել թէ Արևելեան խնդիրն լուծելն ալ ելեքտրական ճրագներ վառելու չի նմանիր։ Այդ խնդրոյ յուզումն գոնէ երկու տարի կը տեւէ։ Նախ ապստամբական շարժումներ և զսպողական փորձեր կը լինին, յետոյ պատերազմ կը ծագի, և վերջապէս վեհաժողով կ'անեն մեծ պետութիւնք։ Եթէ այդ երկամեայ յուզմանց ի սկզբան սկսին Հայք պարաստուիլ, կարող կը լինին ի դէպ պահուն շարժիլ։ Այժմէն իսկ Հնչակեանց հրոսախմբեր կազմելու դրութեանն հաւնած եմ։ Երբ Արևելեան խնդիրն ծագի, կրնան այդ խմբեր միանալ։ Ուրեմն լաւ կ'անեն որ իրենց բոլոր կազմակերպութիւնն վերածեն հրոսախմբայինի, և լեռներու մէջ գործեն, որով քաղաքաց և գիւղերու բնակիչք ինաս չեն կրեր։ Ասկէ զատ ուրիշ կետ մը ալ կայ։ Ռուսիոյ շահն պիտի պահանջէ մի օր տեղական տարրերն ոտքի հանել. ահա այդ պարագայի մէջ մեք ալ ելեքտրական կոճակի կոխելու պէտք պիտի չունենամք։ Լորիս Մէլիքոֆ երբ ի Պէրլին եկաւ 15 տարի առաջ, իւր հետ երկար տեսակցութիւն ունեցանք, յորում պատմեց, ի մէջ այլոց, թէ վերջին Ռուսքնդթուրք պատերազմին ատեն երբ Ռուսաց ասիական բանակն անբաւական էր և ստիպուած էին սպասել պահպանողական կացքի մէջ, հայ հրամանատարն կոչեց հայ գիւղերու գիւղապետներէն գոմանս և գաղտ յորդոր կարդաց որ ոտքի ելնեն, զէնք մատակարարել խոստանալով։ Գիւ-

զապետք կը պատասխանեն «աղա, չե՛նք կանար, Օսմանլուն զալում է, չենք կանար։» Այդ 17 տարի առաջ էր. այժմ չնորհիւ զանազան ջանից այնպէս փոխուած է ժողովրդի տրամադրութիւն որ ապագայ պատերազմի մէջ երբ Ռուսահայ զօրավարն հրաւէր կարդայ, կրնաք երեւակայել թէ ինչպէս պիտի ընդունուի այն։

2. Ճշմարիտ է նաև մեր պատ. եղբայրակցի պնդելն թէ խաղաղական միջոցներ գործածուած են արդէն։ Բայց խաղաղական միջոց մ'ալ կայ զոր պարտիմք գործածել դեռ, այսինքն գժողովուրդս գրգռել։ Այդ է ահա որ մեք կը ջանամք այժմ անել, Եւրոպիոյ հանրութիւնն գրգռել։ Կը շարունակեմք այսպէս անել որպէս զի խնդիրն վառ մնայ, «միրուրի զէման» եղած չլինի։ Նորէն վեհաժողով պիտի լինի մի օր. այն ատեն աւելի մեծ բաժին կը հանեն մեզ, մանաւանդ եթէ շարժում ալ լինի։ Անմիջական արդիւնքի ակնկալութեամբ չէ միշտ որ կ'աշխատիմք։

Նաև կը տեսնեմ թէ այժմէն խլրտելու հարկին վերայ խօսելով կ'ասէ մեր բարեկամ թէ նպատակն այն է որ Հայ'ոց խնդիրն ձեռք առնու Եւրոպա, որոյ առջև շատ ուրիշ խնդիներ կան։

Ուրեմն Եւրոպայի ուշադրութիւնն մեր խնդրոյն դարձուցանելու համար է եղեր որ իրենք խլրտիլ կուգեն։ Ինչո՞ւ ուրեմն իրենց թերթի մէջ միշտ անարգանօք կը յիշեն դիւանագէտներն, քանի որ իրենք ալ Եւրոպայի ուշադրութեան այդքան մեծ կարեւորութիւն կուտան։

3. Մեր յարգելի դիմախօսն կ'ասէ թէ Հայերուն այս միջոցին միայնակ խլրտիլն ապօրինի չէ, զի Կրետէ, Արաբիա ևն ևն եւս առանձին շարժած են։ Կը պատասխանեմ թէ ահա այդ պատճառաւ ալ յաղթուած են։ Պէտք է որ Յոյնն, Արաբն, Կրետացին ևն միանգամայն շարժիլ սովրին։ Ուրիշներ զատ զատ շարժեր են, զի անոնք ալ անմիաբան գտնուած են։ Մի՞թէ իմաստութի՞ւն է որ այժմ Հայք միայնակ շարժին. ո՛չ։ Յիշենք թէ Վասպուրականի մէջ միայն Հայք մեծամասնութիւն են. ուրիշ տեղեր, մանաւանդ ի Փոքր Ասիա, Կեսարիոյ կողմերն, նոքա չնչին փոքրամասնութիւն են բազում ուրեք. ինչո՞ւ Հայերն թնդանօթին բերանն երթան։ Սպասենք։ Պուլկարիա օր մի ոտք պիտի ելնէ զՄակեդոնիա առնլու համար։ Օր մի Կրետէ պիտի ապստամբի։ Օր մի Պուլկարիա պիտի գժտի։ Ընդհանուր պատերազմ պիտի ծագի։ Այժմ փոքրամասնութիւն և անզէն գոլով չենք յաջողիր, մանաւանդ որ մեր երկիրն ծովեզերեայ չէ, եւրոպական զօրք չեն կրնար մեզ օգնել։ Անգլիացիք կ'ասեն թէ Նուսատրմիզն Նոյի տապանն չէ որ Մասեաց գագաթն հանեմք։ Եթէ վստահ լինէինք թէ 20—30 հազար Հայ ջարդուելով գործն կը յաջողէր, թող այնպէս լինէր. բայց այնպէս չէ։

Արաբիոյ ապստամբութեան ատեն ուզուած է եղեր որ Հայք ալ շարժէին, ու չէ յաջողուած. աւելի՛ լաւ, ըստ իս։ Արաբիոյ կոտորածք չեն լսուիր յԵւրոպա, և քրիստոնեայ ազգեր այնքան չեն յուզուիր մահմետականաց ջարդին համար։

4. Ընկերվարականութեան խնդրոյն գալով, տէրութիւնք չեն հալածեր բայց կը վախեն ընկերվարականներէն՝ կ'ասէ մեր պատ. եղբայրակից։ Հալածել կամ վախել իրարմէ շատ տարբեր բաներ չեն այս պարագայի մէջ։ Պրն. Ռշտունեոյ ընկերվարական յայտարարութեանց մասին ալ շատ տարակուսած է Պրն. Կարստեան։ Հաստատ աղբիւրներէ ունիմ այդ մասին տեղեկութիւններս։ Այդ յայտարարութիւնն անելէ յետոյ իւր բանտակցաց պատմած է, և տեսնելով թէ տպաւորութիւնն հաճելի չէ եղած, խելաբերելով երկու նամակ յղած է հիւպատոսին։ Այդ նամակներու միոյն մէջ, որոց օրինակներն ինձ յղած է ի հրատարակութիւն, և զոր ահա ունիմ առաջ, կ'ասէ թէ— Ձեր վստահութեան ներկայութեանն երեկ յայտարարեցի թէ Հնչակեան կուսակցութեան գործադիր անդամ եմ և սոսիալիզմ տարածել կ'ուզէի. բայց ես այդ մասին դեռ ուրիշներու բան չասացած՝ ես և ընկերներս ի միասին ձերբակալուեցանք.....։

Ո՞րչափ աւելի լաւ կը լինէր եթէ երանելի Հայրենասէրն ասէր— մեր նպատակն 61դ յօդուածին գործադրութիւնն է. եթէ այդ յօդուած ՀՆասակար լինէր, Սուլթանն չէր ստորագրեր զայն։ Եթէ ՀՆասակար բան է, պէտք է Սուլթանին մեղադրել որ հաւանած ու խոստացած է զայն ի գործ դնել։

Մեր դրօշակի վերայ ուրեմն 61դ յօդուածն դրենք։

5. Մուրատի խնդրոյն խառնուելու մասին կ'ասէ թէ Համիտի վախնալն լաւ է։ Կը պատասխանեմ թէ հակահամիտեան կուսակցութիւնն քիչուոր և տկար է, կորով չունի։ Մարէնկոյ ի Փարիզ յղուեցաւ Լև Թիւրդի Լիպռ հրատարաբել սկսաւ, բայց կուսակցութիւնն չի կրցաւ չարունակել սալ հրատարակութիւնն երբ Փարիզէն արտաքսուեցաւ խմբագիրն։ Կարծէ՞ր որ այդ պիսի կուսակցութեան մի գործի լինէին մերայինք և 600 Հայեր բանտարկուէին։ Ցայտարարութեան մէջ, զորս ցրուած էին, «Ղատտար Սուլթան» կոչուած էր Համիտ, Համիտ որ կրօնասէր է, մզկիթ և մինարէ կը լինէ անդադար և ժողովրդեան սիրելի դարձած է։ Թուրք ժողովուրդն փոխանակ Սուլթանի դէմ ցասնլու, դէմ ելաւ Հայոց և նախատեց զնոսա. ուրի՛շ արդիւնք կ'ունենար եթէ Սուլթանն յիշուած չլինէր, այլ «ղատտար հիւքիւմաթ, բիւշվաթ եէյէն մէմուրլար» են ասացած լինէին։

6. Մեծ Հայքի սահմանէն դուրս չի գործելու թելադրութեանս պատասխան տրուած է թէ գժգոհութեան պատճառներ Մեծ Հայքէ դուրս ալ կան, են։ Դիտել կուտամ այս նկատմամբ թէ Հայաստանէ դուրս գտնուող Հայեր կրնան ասել թէ զէնքի չդիմեցին ոչ վասն զի գոհ էին այլ վասն զի յոյս չունէին, քանի որ դաշնագրով խոստում տրուած գաւառներուն մէջ իսկ չարեաց դարման չկատարուիր։

61դ յօդուածն մեր յուսոյ խարիսխն է։ Սխալ է կարծել թէ այն ձեռք բերուած է դիւրութեամբ։ ... Խորհուրդ կուտամ որ մեր Հնչակեան եղբարք իրենց ծրագրի մէկ անկիւնն դնեն այդ յօդուածն, զի առանց անոր չատ դժուարութեանց կրնան պատահիլ։ 61դ յօդուածն կրնայ իբրև վահան պաշտպանել զիրենք բազում աւելորդ նեղութենէ։

Թող ասեն թէ իրենց կուսակցութիւն այդ յօդուածի գործադրութիւնն ունի նպատակ։ Ամենքս ալ միևնոյն լեզուն գործածած կը լինիմք այսպէս Ազգային ուժերն միացուցենք մէկ կուռանի վերայ։

Մինաս Զերազի Բանախօսութիւնն

ԱՄԵՐԻԿԱՑԻՈՑ ԱՌՋԵՒ

Ընդ նախագահութեամբ Տէր Սէթ Լոյի, նախագահին գօրմպկիա Գոլէճի, նոյն հաստատութեան գրատան մէջ և մասնաւորապէս Ամերիկացւոց համար ժողով մեղաւ Հոկտ. 4ին, երեկոյին, ուր Տէր Զերազ անգլիերէն ճառ մի կարդաց Հայոց երկրին, ցեղին, պատմութեան, կրօնին, լեզուին և գրականութեան վերայ, և ապա մոգական լապերի միջոցաւ ներկայացոյց բազմաթիւ պատկերներ Անոյ աւերակաց, նշանաւոր Հայոց և հայկական տեսարանաց։

Զերազի ընթերցուածն յոյժ հետաքրքրական և զբօսալի էր ոչ միայն հայ այլ և ամերիկացի ունկնդրաց համար, որք մեծ հաճոյք զգացին և յաճախ ծիծաղեցան ճառին սրախօսութեանց և առակաց առթիւ։

Պատկերներուն մէջ կայր Անոյ աւերակաց մէջ կտնգուն կեցած մայր եկեղեցւոյն, որոյ մասին ճառախօսն ասաց թէ, ութ հարիւր տարուան լռութենէ մի վերջ այժմ դարձեալ սկսուած է 1878 է ն յեռոյ՝ կրօնական պաշտօն կատարուիլ։ Այս իրողութիւն ոևէ օտար քրիստոնէի վերայ հոգեյոյզ տպաւորութիւն գործելու բնութիւն ունի, իսկ մեզ Հայ հաւատացելոցս համար արբեցուցիչ է բոլորովին։ Երանի՛ անոնց որք կրցած են այդ եկեղեցւոյ պաշտամանց ներկայ գտնուիլ, անդ մեր հին սրբազան լեզուի, հին իմաստից և եղանակաց, հին ճարտարապետութեան երիցս վեհ վսեմութեանց մէջ ընկղմիլ հոգւով, և երանի՛ մանաւանդ այն Հայոց որ այդ վերկենցաղեալ զարմանահրաշ տաճարին հնչիւնն իբրև մարգարէական կը լսեն Հոգւով ծագաց ի ծագս աշխարհի և կը յուսան, թէ օր մի բովանդակ Հայաստան այսպէս պիտի վերակենդանանայ և հայկական քաղաքակրթութիւնն պիտի վերածաղկի դերազանց և՛ս գեղեցկութեամբ ի շինութիւն և ի զմայլումն աշխարհի։

Երբ Տէր Զերազ աւարտեց պատկերաց ցոյցն, ամերիկացի ունկնդրաց մին համակրական խօսքերով առաջարկեց որ շնորհակալութեան քուէ տրուի ճառախօսին, և ուրիշ ամերիկացի մ՝ալ, նոյնպէս պատ-

չաճ և ջերմ բանիւք կրկնեց առաջարկն, որ միաձայնութեամբ ընդունուեցաւ։

Յայնժամ ժողովոյն նախագահն՝ Սէթ Լոյ՝ ուշագրաւ իմաստիւք և համակրանօք խօսեցաւ Հայոց մասին և հրաւիրեց որ եթէ Հայասիրական ընկերութեան անդամոց մէջէն ևս կայ մէկն որ խօսիլ կը բաղձայ, խօսի։

Այս հրաւիրին պատասխանեց Ն. Պոյճեան։ մաքուր անգլիերէնով մի քանի խիստ ակնարկութիւններ արաւ թրքական զեղծմանց և ապա յանուն Հ. ընկերութեան՝ ամերիկացի հիւրերուն և նախագահին շնորհակալութիւն մատոյց և վերջ եղաւ ժողովոյն։

Բայց ո՛չ, սխալեցանք կարծելով թէ աւարտած էր ժողովն։ մի կարեւոր Հայ անձնաւորութիւն ունէր ասել մի յոյժ կարեւոր բան Ամերիկացւոց, վասն որոյ անկիւնին մէկէն գողի քայլերով և մուրացկանի պէս չքմեղանք կակագելով յառաջացաւ դէպ ի բէմ, «էքքսքուզ մի...» ասաց և այլանդակ շարժմամբք, սխալախիտ անգլիերէն լեզուաւ և անճոռնի արտասանութեամբ շարունակեց։ Հայ ունկնդիրք սարսափոյ և մտատանջութեան տագնապով բռնուած, որուն յայտնապէս մասնակից էր և Զերազ. ունկնդրեցին, շատք գլխիկոր և ոմանք երեսներն գլխարկի ետև պահած.

Խիզախ մարդուկին յոյժ կարևոր ասելիքն այն եղաւ թէ ինքն Ամերիկայի Հայոց պատուիրակն եղած է առ արեւելեան Վեհապետ մի ...։ Այսու Ամերիկացիք կրցան չափել Ամերիկայի Հայոց խելքին կամ անխելքութեան չափն նոցա պատուիրակին համեմատութեամբ...։

Այսպիսի ցեխոտմամբ, այսպիսի խայտառակութեամբ վերջացաւ ժողովն։

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Հեռագիրք ի Կ. Պոլսոյ լուր կուտան թէ Սուլթան շատ շարժած է Հայ բանտարկելոց ի նպաստ Անգլիոյ մէջ գործուած յուզմունքէն։ Հրաման արած է որ Էնկիւրիի դատաստանին վերաբերեալ թղթերն իւր արջեւ դրուին - մասնաւորապէս փրոֆ. Թումայեանի և Գայաեանի վերաբերեալներն։ Շաբաթ մի առաջ այդ թղթերէն մասեր քաղուեցան և սպտ. 18 ին յղուեցան Թուրքիոյ անգլիական դեսպան Ռիւսթէմ փաշային ի Լոնտոն։ Սուլթանին մէկ քաղաքավար ինքնագիր նամակն ևս ի միասին ուղարկուեցաւ։

—Կ. Պոլսէն առ Տէյլի—Նիւզ կը հեռագրեն—Սպտ. 20ին Տեղական թերթք ստիպուեցան հրատարակել Էնկիւրիի դատաւարութեան մանրամասնութիւնքն աւելորդ առատութեամբք։ Վհիոներն հիմնուած են իբր թէ խոստովանութեան վերայ, բայց առանց յիշելու այն պարագայն թէ խոստովանութիւնքն ստացուեր են տանջանաց շնորհիւ։ Ի մէջ բերուած է նաև նամակ մի հաւանօրէն Տիկի՝ Թումայեանի, որ կը խօսի աղօթից, երկպագութեան և ուսուցման ժողովոյ վերայ, և զոր ապստամբական նպատակաց կ'ընծայէ Դատարանն։ Ժողովուած զէնքերու ամբողջութիւնն է մէկ Ուինչէսթր, մէկ Մարթինի, և երկու Բիվոլվըր։ Հայ բանտարկեալք շարունակ ի Կ. Պոլիս կը բերուին։

—Ամսոյս 20ին Օրիորդ Իգապէլ եւ Գինէ Պէյլիկճեան, դուստր Մեծ. Պէյլիկճեանի, ամուսնացած է ընդ Մեծ. Վարդան Քէշիշեանի։ Կը մաղթեմք որ տարօսն մնացեալ մեր բազմաթիւ տուրիներուն գըլուին լինի։

—Շնորհակալութեամբ ստացանք Գ. Յ. Ա. ի մէկ նամակն Ուօշինկթընէ, որ կը պատմէ մեզ բաղձացեալ մանրամասնութեամբ Ամերիկեան քաղաքացի եղած Հայու մի եղած զրկանքն ի Թուրքիա։ Այդ դէպքն «Հայքի» մէջ հրատարակել աւելորդ է, պիտի գործածեմք այդպիսի իրողութիւններ բուն ամերիկացւոց առջեւ։

Կը սպասեմք ուրիշ այդպիսի տեղեկագրութեանց։

SECOND HAND BICYCLES

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԵԾԵԼԱՆԻՆԵՐ

Այնպէս կը նորոգենք որ նորի պէս կ'երևի և կը վաճառենք այն գնով որ մեզի արժած է՝ վասն զի չենք ուզեր զալ եղանակին պահել զայնս։ Հեծելանիւներն կրնաք հոս գործածել և ապա տանել ձեր սիրելի հայրենիքն։

Լ. Մ. Ալեքսանդր, L. M. Alexander
191 Front st, Worcester Mass.

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԸՆԴՀԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր։

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք։

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալէրի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմանին։

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանագրեալ հազար կամ աւելի թալէրն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինիւ։

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

C. F. RANDALL

177 Front ST. Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթրրի արգոյ հայ հասարակութեան թէ իմ վերոյիշեալ խանութին մէջ կօշիկներ և բոպերներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ հայ հաճախորդաց։

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և ՄԻԱՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգանք Ձերդ Բանտալ

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ Հայ հասարակութեան թէ առանց քարի, և միանգամայն մաքուր ու ընտիր պուլղուր կը վաճառենք, փաունտը 8 սէնթի միայն, փութով հրամանները կը կատարուին միայն անոնց որք կանխիկ կը վճարեն։

Նիւ Եորքի եւ ծէրզիի Հայերն եթէ 25 փաունտէ աւելի գնելու լինին փոխադրութեան ծախքը մենք յանձն կառնունք վճարել։ Իսկ ուրիշ քաղաքաց մեր յաճախորդներն առնուազն 50 փաունտ գնելու են փոխադրութեան ծախքէ ազատ մնալու համար։

Փորձեցէք մեզ և գոհ պիտի ըլլաք։

S. HAUVSEPIAN
582 PALISADE AVE.
JERSEY CITY HEIGHTS, N. J.

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK
27դ և 28դ փողոցաց միջև

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք գինուորական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ· աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան· Տպարան Մ· Ս· Գաբրիէլեանի գին50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս«Արևելք»ի մէջ հրատարակուած· գրեաց Մ· Ս· Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր·

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ· Ս· Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ· Ս· ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Բաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցուցնելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

BUSH & CO.
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
ԳԵՂԱԳԻՐՔ
(Հաստատեալ ի 1849)
65 Front St. Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՊԱՏՈՒՀԱՆԻ ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐ, ժամն եւ պատուական պիտի գտնէք մեր խանութն, հատն 20, 25, 30, սէնթի։ Նաեւ պատի թուղթ։ Հրամեցէք ի
250 Main ST. (Մէյն փողոց)
WORCESTER MASS.
Ֆրանք Հօէի մթերանոցն

MORRISON & Co.
88 Fulton Street New York
ՄՕՐԻՍԸՆ ԵՒ ԸՆԿ.
ՎԱՐՊԵՏ ԴԵՐՁԱԿ
Կը շինին պատուական ձեռք մի ըզգեստ 20 տալերով, օվըրքոթ 20 տալերով և փանթալոն 5 տալերով։

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK
311 Main St. Worcester, Mass.
ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՎԻՆԿՍ ՊԷՆՔ
Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը հարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբոյ կէսէն հաշուելով։

Ո՛ Հայեր,
որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կուգան իմ գներս։ Իմ անունս Լաշանս է, և խանութս կը գտնուի Ֆրոնթ սթրիթի 60 նիւմէրոն։ Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ։ Ո՛վ որ կ՚ուզէ չխաբուիլ և շունչը չհատցունել գին կտրելու համար, և ո՛վ որ չուզեր որ ոտքն նասըր լինի, թող գայ և իմ ընտիր կոշիկներն փորձէ։
T. LACHANCE, կօշկավաճառ
60 Front St. Worcester, Mass.

ՎԱՃԵԼՈՒՔ ԶԳԵՍՏՆԵՐ
գնելու համար
եկ
THE STAR CLOTHING Co.
Գին կտրել չկայ
Վասն զի մէկ գին միայն ունի, բայց չափաւոր և ճիշդ գին։ Մեր հասցէն է
385 Մէյն Փողոց, Ուուսթըր,
385 Main St. Worcester, Mass.

Յակոբ Էքիզեան Կարապետ Էքիզեան
30 Eddy street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston Mass.
ԵՂԲԵՐՔ Յ. ԷՔԻԶԵԱՆ
Յովհաննէս Էքիզեան Գէորք Էքիզեան
Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդուստներու շահերն միևնոյն տան վերաբերելոյն, մանաւանդ Միացեալ Նահանգաց ջրամատանց միոյն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերն ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն։ Անոնք որ կը կարօտին ըստակ ղրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պոլիս, Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Արաբկեր, Զիմիշկէզէկ, Զունքուշ, ընդհանուր չրջականերովն, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանաց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակադրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի գանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու։

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ
286, 7դ Էվինիու Նիւ Եորք
26դ և 27դ Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ